

## Հայերէն

5-րդ դասարան

Դասատու- Աճի Տաքէսեան

Դասագիրք- «Մայրենի Բարբառ» Դ.Գիրք Աղամի Ֆատըզնեան  
Վարժութեան Ա. Եւ Բ. տետրակ

Ընթերցանութիւն- Դասարանը սորվելէ ետք աշակերտէն կ'ակնկալուի սահուն ընթերցանութիւն,  
յարգելով կէտադրական եւ առոգանութեան նշանները:

Բառագիտութիւն- Իրաքանչիւր հատուածի «նոր» բառերը աշակերտը կը սորվի գրելով ,  
որպէսզի վարժութիւնը ունենայ զանոնք անսխալ գրելու ստուգումներու մէջ:

Դասագիրքի Հարցարան- Իրաքանչիւր դասի ընթացքին եւ աւարտին նշուած դասանիթին  
մասին կը կատարուի անհրաժեշտ հարցադրումներ, որոնց ընդմէջէն աշակերտը կը լուսաբանուի եւ  
կը մղուի ճշգրիտ ձեւով հարցումներու պատասխանները գտնել: Պատասխանները պէտք է ըլլան  
ամբողջական նախադասութեամբ եւ ո՞չ մէկ կամ երկու բառերով: Աշակերտներէն եկած ճշգրիտ  
պատասխանները համադրելով կ'ունենանք ճշգրիտ պատասխան մը, զորս աշակերտները  
կ'ընդօրինակեն իրենց տետրակներուն մէջ: Գրաւոր ստուգումի համար աշակերտը պէտք չէ գոց  
սորվի զանոնք:

Վարժութիւններ-«Մայրենի Բարբառ»-ի Տետրակ- Վարժութիւններու շարքը կ'օգտագործուի  
ընթերցարանի համապատասխան նիւթին հետ զուգահեռ: Դասարանին մէջ աշակերտին կը  
ներկայացնի նիւթը եւ հրահանգներու ընդմէջէն ան կ'ամրապնդէ զանոնք: Տան  
պարտականութիւններու պատասխանները պէտք է տրուին աշակերտին կողմէ, նոյնիսկ եթէ  
ճշգրիտ չեն անոնք, որովհետեւ ան ծանօթ է նիւթին, դասարանին մէջ հրահանգէն նմուշ մը  
կատարուած է եւ ի՞նք իր ճիգերով պէտք է մտածէ եւ լուծումներ գտնէ: Վարժութիւնները կը  
սրբագրուին դասարանին մէջ:

Նախադասութիւն կազմել- Կարճ պարբերութիւններ գրել- Նոր սորված կարգ մը բառ- երով  
աշակերտը նախադասութիւն կը կազմէ, որ կը սրբագրուի դասարանին մէջ, սակայն ան պէտք  
չունի գոց սորվելու զանոնք ստուգումի համար:

Աշակերտներէն կ'ակնկալուի նաեւ իրենց սորված նոր բառերով կարճ պարբերութիւններ  
գրել կիրարկելով իրենց սորված ուղղագրական կանոնները եւ գրաւոր վարժութիւններու  
ընդմէջէն ամրապնդած օրէնքները:

Արտասանութիւն- Տարբեր առիթներով եւ նիւթերով աշակերտները կը սորվին  
ոտանաւորներու շարք մը: Գոց սորվելու աշխատանքին մեծ մասը կը կատարուի դասարանին  
մէջ:

❖ Յատուկ ուշադրութիւն դարձնել գիրի մաքրութեան եւ կոկիկութեան, ինչպէս նաեւ գրելու  
ճիշդ ձեւին:

**Ուղղագրութիւն-** Ուղղագրական ստուգումները կը կատարուին շաբաթական դրութեամբ։ Դասարանին մէջ աշակերտը կը ծանօթանայ զանազան ուղղագրական օրէնքներու եւ զանոնք կը կիրարկէ ուղղագրութեան համար պատրաստուելիք պարբերութեան մէջ։ «Մայրենի Բարբառ» տեսութակի ուղղագրական ծրագիրն է, որ կը կիրարկուի 5-րդ դասարանի համար։

### **Արժենորում**

- Գրաւոր իւրաքանչիւր ստուգում 100%
- Մասնակի գրաւոր ստուգումներու ամբողջութիւնը (Quizzes) 100%
- Բերանացի ստուգում 100%
- Ուղղագրութեան 100%

## «Մայրենի Բարբառ» վարժութեան տեսքակ

### Բառագիտութիւն

- Հոմանիշ բառեր
- Հականիշ բառեր
- Նմանաձայն բառեր
- Նոյնանիշ բառեր

### Քերականութիւն

- Բային սահմանական եւ ըղծական եղանակները
- Գոյականներու հոլովումը
- Թուական անուն
- Դերանուն
- Նախադասութեան տեսակները

Պարզ եւ բարդ նախադասութիւններ

Պարզ համառօտ եւ պարզ ընդարձակ նախադասութիւններ

- Նախադասութեան գլխաւոր անդամները – Ենթակայ եւ ստորոգիչ
- Պարզ ստորոգիչ եւ բաղադրեալ ստորոգիչ
- Գոյականական անդամի լրացումներ
- Նախադասութեան երկրորդական անդամներ

### Բառակազմութիւն

- Արմատ եւ արմատական բառ
- Ածանցաւոր բառեր

### Ուղղագրութիւն

- Ե-Է
- Ռ-Ր
- Ի՞նչ գրել Ղ, տառէն ետք
- Ո-Ո
- Հնչիւններու վերաբաղ